ԱՀ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

# ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՈՒՄ

## 5-րդ դասարան

# Մ Ա Յ Ր Ե Ն Ի

ԹԵՍՏ 2

Շրջան, քաղաք ______________________________________________

Ուսհաստատություն ___________________________________________

Դասարան ________________________________________________

Ա. Ա. Հ. _________________________________________________

Ամսաթիվ ________________________________________________

*Սիրելի՛ աշակերտ*

Թեստ-գրքույկն ընդգրկում է 20 առաջադրանք:

**1-4-րդ,6,7-րդ,14-րդ, 16-րդ և 20-րդ** առաջադրանքները լրացնել:

**5-րդ, 11-րդ և 19-րդ** առաջադրանքներում կատարել համապատասխանեցում:

**8-10-րդ,12,13-րդ, 15-րդ և 17,18-րդ** առաջադրանքներում տրված են պատասխանի տարբերակներ: Պահանջվում է ճիշտ պատասխանի համարը (համարները) վերցնել շրջանակի մեջ: Եթե գտնում եք, որ սխալ եք նշել, նշված պատասխանի համարի վրա դնում եք X նշանը (3) և նոր շրջանակի մեջ վերցնում ճիշտ պատասխանի համարը:

Թեստ գրքույկի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխան գնահատվում է **1** միավոր, սխալը՝ 0:

Թեստ գրքույկի առավելագույն միավորը **20:**

Աշխատանքի կատարման համար տրվում է **50** րոպե:

*Յանկանում ենք հաջողություն*

2018 -2019

Թեստ 2

*1-4-րդ առաջադրանքները լրացնել*

1. Հայերենի երկհնչյուններն են՝_______________________________________________________:

2. Տեքստը շարադրանքի երկու հիմնական ձև ունի՝ ____________________________________:

3. Հնչյունը այնպիսի ձայն է, որից կազմվում է __________________________________________:

4. *Արտահայտությունը գրել մեկ բառով:*

   *ամպերի ձայնը* - _______________________

5. *Համապատասխանեցնել.*

| Բառ | Վերջածանց |
|---|---|
| 1) խմոր | ա) ավոր |
| 2) շունչ | բ) ային |
| | գ) եղեն |
| | դ) ակ |

Պատասխան՝ 1-___, 2-___

*6,7-րդ առաջադրանքները լրացնել*

6. Թվականը գրել տառերով:

   92 - _________________________________________________________________________:

7. *« Խոսող ծուկը»* ստեղծագործության հեղինակն է՝ _____________________________________:

*8,9- րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ*

8. *Հինգ հնչյուն ունեցող բառերն են՝*

   1) ճրագ, 2) մինչև, 3) նշխար, 4) շղթա, 5) որդի

9. Ո՞ր բառերում է գրվում *-հա-* երկհնչյունը*:*

   1) օվկ...նոս, 2) իդ...ալ, 3) սոց...լական, 4) զինկոմիսար...տ, 5 ) լ...րդ, 6) Ամալ..., 7) բամ...

10. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

   Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *- o -*:

   1) ան...րակ, մի...րինակ, աման...րյա
   2) ապ...րինի, ազգ...գուտ, տն...րեն
   3) ամեն...րյա, արջա...րս, մեղմ...րեն
   4) բ...ժոժ, պարզ...րոշ, օր..րոց

11. *Համապատասխանեցնել.*

*Բառ*

1) խա...շիկ
2) ս...ավոր
3) սր...սրթալ
4) ասացվա...ք

*Բաց թողնված տառ*

ա) *ձ*
բ ) *փ*
գ) *ք*
դ) *թ*
ե) *ծ*
զ) *բ*
է) *գ*
ը) *դ*

Պատասխան՝ 1-___, 2-___, 3-___, 4-___

*12,13 -րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ*

12. Նախադասությանը համապատասխանող բառն է՝

Երեխան ահա ինը ժամ է *1) անզարդ, 2) անզարթ* քնած է:

13. Նախադասության մեջ փոխաբերական իմաստ ունեցող բառն է՝

Կանաչների միջով հևասպառ հոսում էր *1) լեռնային* գետակը:
*2) վճիտ*
*3) վրդովված*

14. *Լրացնել.*

*Լեզու գտնել* դարձվածքի իմաստն է՝ ________________________________________:

15. *Ճիշտ պատասխանի համարը վերցնել շրջանակի մեջ:*

*Կմոլորվեր մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,*
*ԿԿորչեինք, եթե ճամփին չբոցկլտար հայոց լեզուն:*
*Ուրեմն եՙկ փառաբանենք, փայլեցնենք թրի նման,*
*.........................................................................................:*

Բաց թողած տողած տողն է՝

1) Որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն...
2) Մեր սրտի ջուր, մեր հոգու լար հայոց լեզուն...
3) Տվել է մեզ երազ ու երգ և ճանապարհ՝ հայոց լեզուն...

16. Լրացնել.

*Կենսունակ* բառի բացատրությունն է՝ ____________________________________________:

*17,18- րդ առաջադրանքներում ճիշտ պատասխանի բոլոր համարները վերցնել շրջանակի մեջ*

17. *Ո՞ր բառակապակցություններն են դարձվածքներ:*

1) միրգ քաղել , 2) գույնը գցել, 3) դուռը բացել, 4) աչքերը կկոցել, 5) ոտքերն ընկնել, 6) վիզը ծռել, 7 ) աչքով անել

18. <u>*Անգութ*</u> բառին հականիշ են՝

1) վայրագ, 2) գթառատ, 3) անողորմ, 4) գորովագութ, 5) բարեսիրտ

19. *Համապատասխանեցնել.*

| Ստեղծագործություն | Հեղինակ |
|---|---|
| 1) «Հայերեն» | ա) Լևոն Խեչոյան |
| 2) «Եղեգնուհին» | բ) Մկրտիչ Կորյուն |
| 3) «Մուրացկանը և հարուստը» | գ) Ղազարոս Աղայան |
| | դ) Նաիրի Զարյան |
| | ե) Խաչիկ Դաշտենց |
| | զ) Լեոնարդո դա Վինչի |

Պատասխան՝ 1-___, 2-___, 3-___

20. *Լրացնել.*

**Ըստ «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթի՝**

*« - Մի չվախ՛ վերցրու, գնա՛ այսինչ սարը: էնտեղ ման կգաս, մի քարայր կգտնես, կմտնես, կտեսնես մեջը լիքը ոսկի, ակն ու մարգարիտ ու հազար ու մի տեսակ թանկագին քարեր. կվերցնես, կբերես, կհարստանաս, քանի կաս, քեզ համար հանգիստ կապրես»:*

Խոսքերը պատկանում են________________________________հերոսին:

Լրացնում է ստուգողը

| | |
|---|---|
| Ընդհանուր միավորը | |
| Գնահատականը 10 բալանոց սանդղակով | |

Ստուգող՝ ________________________ _____________

Ա.Ա.Հ ստորագրություն